ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՄԱՐՍԵԼՈՒՄ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը 1965 թվականի դեկտեմբեր 30 թվակիր սրբատառ կոնդակով, ընդառաջելով Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանի առաջարկին և Մարսելի հայոց Մայր Եկեղեցու վարչության խնդրանքին, Հարավային Ֆրանսիայի և Մարսելի հայոց հայրապետական պատվիրակի փոխանորդ էր նշանակում Երուսաղեմի հայոց Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ, նորապսակ գերաշնորհ Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյանին։

Հայոց Հայրապետն իր սրբատառ կոնդակում Մարսելի բովանդակ հայության հղելով Միածնէջ Ս. Տաճարից աստվածային օրհնություն և հայրական ողջույն, հույս էր հայտնում միաժամանակ, որ գերաշնորհ Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյանը «իր իմաստուն և խաղաղարար ոգիով, իր բարի ու ժրաջան աշխատանքով ու իր հոգևոր հեղինակությամբ, կրոնական շինարար կյանքի նոր շրջան մը պիտի սկզբնավորեն», հոգեպես մխիթարելով և առաջնորդելով իր խնամքին հանձնված հավատացյալ ժողովրդին, համաձայն Հայ Եկեղեցու սուրբ կանոնների, ավանդության և երկրի բարեխնամ պետության օրենքների, որոնց ներքո խաղաղ և բարգավաճ ապրում է շուրջ 40 000 հայություն։

Մարսելի բովանդակ հայությունը և ազգային-եկեղեցական ու մշակութային կազմակերպությունները որդիական երախտագիտությամբ և շնորհակալությամբ ընդունեցին Ամենայն Հայոց Հայրապետի Հարավային Ֆրանսիայի հայությունը եկեղեցական նոր իշխանությամբ օժտելու հայրապետական այդ կարգադրությունը։

Հայրապետական պատվիրակի փոխանորդ սրբազանը Մարսելի Մարիանի օդանավակայանում ջերմորեն և արժանավայել շուրջով դիմավորվում է եկեղեցականների, եկեղեցական պաշտոնական մարմինների և հավատացյալների հոծ բազմության կողմից։ Սրբազան հոր ժամանումը ողջունում են նաև ֆրանսիական պետական, եկեղեցական պաշտոնական մարմինների ներկայացուցիչներ։ Այնուհետև սրբազանը հանդիսավորությամբ առաջնորդվում է Մարսելի հայոց Մայր Եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով, և ողջունելով բոլոր ներկաներին, հաղորդում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները։

Տաճարում հանդիսության ներկա են լինում նաև հայ կաթողիկե և հայ բողոքական եկեղեցական պետեր, ազգային-եկեղեցական մարմինների և հայ հոգևորականության ներկայացուցիչներ։

Թեմի անունից, սրբազանի ժամանումը Մարսել ողջունում է հոգեշնորհ Տ. Վազգեն վարդապետ Քեշիշյանը։

Սրբազանը ողջույնի սրտագին խոսք է ասում, հայտնելով նաև իր շնորհակալությունը ջերմ դիմավորության և ընդունելության համար և օրհնում է բոլոր ներկաներին։ Տեղական ֆրանսիական մամուլը, ձայնասփյուռը և հեռուստատեսությունը լայնորեն արձագանքում են սրբազանի ժամանմանը։

Հունվարի 6-ին, հինգշաբթի օր, Ս. Ծնընդյան տոնի առթիվ, գերաշնորհ Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյանը Մարսելի հայոց Մայր Տաճարում մատուցում է իր պաշտո-

նական անդրանիկ պատարագը և քարոզում օրվա մեծ տոնի՝ խաղաղության խորհրդի և նշանակության մասին, հավատացյալ խուռներամ ժողովրդի ներկայության ստեղծելով հոգևոր մխիթարության և բերկրանքի խանդավառ մթնոլորտ։

Հունվարի 17-ը կրկին ուրախության, ազգային հպարտության տոն էր Մարսելի և Հարավային Ֆրանսիայի հայության համար։ «Իրապես փառավոր և միջեկեղեցական հանդիսության օր մը եղավ հունվարի 17-ը»,— գրում է մեր թղթակիցը։

Գերաշնորհ Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյանը պատարագում է Մարսելի հայոց աթոռանիստ Սրբոց Թարգմանչաց վարդապետաց Մայր եկեղեցում։ Այդ հանդիսության ներկա է լինում գերաշնորհ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը։ Եկեղեցու աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել ֆրանսիացի պետական, եկեղեցական, հասարակական հայտնի դեմքեր, որոնց թվում Մարսելի կաթոլիկ.առաջնորդի ներկայացուցիչ Արտյուֆել եպիսկոպոսը, Մարոնիտ Պատրիարքի փոխանորդ գերաշնորհ Հայեք եպիսկոպոսը, Մոնակոյի իշխանապետության առաջնորդ գերաշնորհ Տ. Շաուլ Ռյուպ արքեպիսկոպոսը, աբբա Սենտյուրիեն, ֆրանսիական ավետարանական համայնքի պետ վերապատվելի Բերտրանը, Մարսելի քաղաքապետի ներկայացուցիչը, քաղաքապետական խորհրդի անդամ Կոտին, նահանգային խորհրդից մետր Ֆ. Ռիպերը, բժիշկ կոլոնել Ֆաբրը և այլ հյուրեր։

Սուրբ պատարագին ներկա են նաև Մարսելի հայ ավետարանական համայնքի պետ, վերապատվելի պրոֆ. Խայիկյանը, հայ մկրտչական համայնքի պետ վերապատվելի Հարությունյան Հելվաճյանը, հոգեշնորհ Տ. Վազգեն վարդապետ Քեշիշյանը, հոգեշնորհ Տ. Տարոն վարդապետ Ճերեճյանը, Տ. Խոսրով քահանա Ասատուրյանը, Տ. Հայկազուն քահանա Բանրիկյանը, Տ. Եղիշե քահանա Փանոսյանը, Տ. Հմայակ քահանա Համբարձումյանը, Տ. Ատոմ քահանա Իքեճյանը և բազմաթիվ պաշտոնական ազգայիններ Մարսելից, Նիցցայից, Մոնակոյից և այլ վայրերից։

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը, ներկայացնելով հայրապետական պատվիրակի փոխանորդին՝ ժողովրդին և ազգային բոլոր մարմիններին, վեր հանելով Տ. Հակոբ եպիսկոպոսի եկեղեցանվեր, օգտակար և շինարար ծառայությունները Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց Աթոռին, Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին։

Հավարտ սուրբ պատարագի, Մարսելի բոլոր հայ ընկերակցություններից բաղկացած հանձնախումբը կազմակերպում է մեծ ընդունելություն ի պատիվ հայրապետական պատվիրակի, փոխանորդի և բոլոր օտար և հայ հյուրերի, Մարսելի տոնավաճառի ընդարձակ սրահում։

Պատվո սեղանի շուրջ տեղ են գրավել հայ և օտար բարձրաստիճան եկեղեցական և պետական պաշտոնական հրավիրյալներ և հյուրեր։

Սեղանը օրհնում է Տ. Սերովբե սրբազանը, այն շնորհալիորեն վարում է Տ. Վազգեն վարդապետը։

Ընդունելության ժամանակ ելույթ է ունենում Մոնակոյի առաջնորդ գերաշնորհ Տ. Շաուլ Ռյուպ եպիսկոպոսը, որը «մեծ խանդավառություն է ստեղծում իր պերճախոսությամբ, դրվատելով Ս. Էջմիածինը, մեր հայրենիքի վերելքը և Վեհափառ Հայրապետի եկեղեցանվեր գործունեությունը», հայտնելով նաև իր հիացումն ու սքանչացումը հայ ժողովրդի, նրա հոգևոր, մշակութային արժեքների, հայոց հայրենիքի և նրա ղեկավարների հայրենանվեր աշխատանքների մասին։ Ապա խոսք է առնում Մարսելի քաղաքապետի և ֆրանսիական ավետարանական համայնքի ներկայացուցիչը։ Այնուհետև ելույթ են ունենում պրոֆ. Խայիկյանը, վերապատվելի Հարություն Հելվաճյանը, «որոնք խոստացան, հանուն իրենց համայնքներուն, օժանդակել և աջակցիլ Ս. Էջմիածնին, նոր նշանակված հայ հովվապետին»։

Ջերմ, բովանդակալից ելույթ է ունենում նաև հայտնի հրապարակագիր պր. Ենովք-Արմենը, ֆրանսերեն լեզվով։

Հանդիսության գեղարվեստական բաժնին իրենց մասնակցությունն են բերում երգով և արտասանությամբ հոգեշնորհ Տ. Տարոն վարդապետը, օրիորդ Ժանետ Դավթյանը, տիկին Մորենոն, Վ. Վարդանյանը, Պերճ Կարապետյանը, Գ. Տ. Դավթյանը, տիկին Կիրակոսյանը։

Գերաշնորհ Տ. Հակոբ եպիսկոպոսը նույնպես խոսք առնելով, շեշտում է ազգային-եկեղեցական միասնության ամրապնդումը, «հայ գաղութի փոքր ածուն», Հայ Եկեղեցին Հարավային Ֆրանսիայի մեջ շեն ու պայծառ պահելու համար սրտագին կոչ է անում համագործակցության բոլոր հայրենասերներին, առանց դավանանքի և գաղափարի տարբերության։

Ընդունելության վերջում երախտագիտության և ջերմ շնորհակալության խոսք է ասում գերաշնորհ Տ. Սերովբե արքեպիսկոպոսը՝ ֆրանսիական բարեխնամ իշխանությանց և ներկա ֆրանսիացի բոլոր եկեղեցական և պետական ներկայացուցիչներին։ Սրբազանը այնուհետև կոչ է անում ճաշկերույթին ներկա ազգային-եկեղեցական մարմիններին, ծանոթ ազգայիններին՝ թև ու թիկունք կանգնել հայրապետական պատվիրակի փոխանորդ գերաշնորհ Տ. Հակոբ եպիսկոպոսին, որպեսզի միշտ պայծառ մնան հայ եկեղեցիները Միջերկրականի այս ափերի վրա, և խաղաղ՝ հայ կյանքը այս հյուրընկալ երկնքի տակ։

Ընդունելությունը վերջանում է գերաշնորհ Տ. Սերովբե արքեպիսկոպոսի օրհնությամբ և բոլոր ներկաների կողմից «Հայր մեր»-ի երգեցողությամբ։

Ֆրանսիական տեղական մամուլը լայնորեն նորից արձագանքում է հունվար 17-ի հայկական այս հիշարժան հանդիսություններին, ի մխիթարություն Ֆրանսիայի հայ ժողովրդի։